# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՆԱՏԻՎԱ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/191 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 2 | ՍԱՄՏԵՔՍ | ՍԱՄՏԵՔՍ ՍՊԸ | Անհրաժեշտ է ձեռք բերել դպրոցահասակ երեխաների համար նախատեսված մանկական և պատանեկան ունիվերսալ (unisex) սպորտային լրակազմ հավաքածու՝ բաղկացած երկարաթև վերնահագուստից և համապատասխան տաբատից, նախատեսված գարուն–ամառ սեզոններին կրելու համար: Լրակազմը պետք է պատրաստված լինի բարձրորակ «երկթել» գործվածքից (French Terry), որի կազմը ներառում է 70-80% բամբակ և 20-30% պոլիեստր՝ ապահովելով հագուստի շնչող հատկությունը և կանխելով լվացումից հետո դեֆորմացիան ու գնդիկավորումը (խտությունը՝ 240-280 գ/մ²): Վերնահագուստը պետք է լինի երկարաթև, ունենա կրկնակի շերտով գլխարկ՝ կարգավորվող քուղով, առջևի մասում՝ 2 գրպան, իսկ թևքերն ու ստորին եզրը պետք է ավարտվեն առաձգական ռեզինե հյուսվածքով (rib-knit): Լրակազմի տաբատը պետք է լինի դեպի ներքև ուղիղ ձևվածքով՝ չնեղացող, ունենա լայն ռեզինե գոտկատեղ՝ լրացուցիչ քուղով, երկու կողային ներկարված գրպաններ և ստորին հատվածում՝ ամուր ռեզինե |

| | | | |
|---|---|---|---|
| | | | մանժետներ: Բոլոր կարերը պետք է լինեն պրոֆեսիոնալ մշակված, ամրացված և մաշկի համար անվնաս: Ապրանքը պետք է լինի անհատական թափանցիկ փաթեթավորմամբ և ունենա հայերեն մակնշում՝ չափսի ու խնամքի հրահանգների վերաբերյալ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

НАТИВА ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/191 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | фирменное наименование | наименование производителя | технические характеристики |
| 2 | | | |